

Լատրա Բաղայան

ԵՊՀ եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի հայցորդ

ՃԱՆԱԶՄԱՆ ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ. ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ

Չնայած անհատի և ոչկառավարական կազմակերպությունների շարունակաբար աճող դերակատարությանը միջազգային հարաբերություններում, պետությունը հանդիսացել և շարունակում է հանդիսանալ միջազգային իրավունքի կենտրոնական սուբյեկտը, մինչդեռ պետության իրավասուբյեկտությունն անմիջան և սերտ կապվածության մեջ է գտնվում ճանաչման ինստիտուտի հետ: Իսկ այն հեղինակների համար, որոնք որդեգրում են պետությունների ճանաչման սահմանադրական տեսությունը կարելի է խոսել ոչ միայն պետությունների իրավասուբյեկտության և ճանաչման ինստիտուտի կապվածության, այլ նաև կախվածության մասին: Չնայած այս հանգամանքին ճանաչման ինստիտուտը բազմաթիվ հեղինակների կողմից որակվել է և շարունակում է որակվել որպես միջազգային իրավունքի առավել թույլ օղակներից մեկը¹: Պ.Մալանչուկն անվանում է այն միջազգային իրավունքի, ներպետական իրավունքի և քաղաքականության խառնաշփոթ²: Վերջինիս առաջնային պատճառը նրանում է, որ պետությունները այս կամ այն պետությունը կամ կառավարությունը ճանաչելիս առաջնորդվում են նախևառաջ ոչ թե իրավական նկատառումներով, այլ իրենց սեփական քաղաքական շահերով, թեև ճանաչումը հանգեցնում է որոշակի հստակ իրավական հետևանքների: Արդյունքում, մի շարք հեղինակներ, մասնավորապես Յ.Բրաունլին, գտնում են, որ ճանաչումն ընդհանրապես չի հանդիսանում հստակ իրավական նշանակություն կրող իրավական ինստիտուտ և որ տվյալ եզրույթը կրում է տարբեր քաղաքական կամ իրավական երանգներ կախված համատեքստից³:

¹ *Dugard J.* Recognition and the United Nations. Grotius Publications Limited, Cambridge, 1987. P. 1. *Lauterpacht H.* Recognition in International Law. Cambridge University Press, Cambridge, 1947. P. 7.

² *Malanczuk P.* Akhurst's Modern Introduction to International Law. 7th revised ed., Routledge, London-New York 1997. P. 82:

³ *Brownlie I.* Recognition in Theory and Practice // The Structure and Process of International Law: Essays in Legal Philosophy Doctrine and Theory. Ed. by Macdonald R.St.J. and *Johnston D.M.* Martinus Nijhoff Publishers, The Hague / Boston / Lancaster, 1983. P. 627-628:

Եվ իրոք, թեև ոչ գիտական հանրության ոլորտում առավել հայտնի է պետությունների ճանաչման հասկացությունը, իրականում պետությունների կողմից միակողմ ճանաչման ենթակա են միջազգային հարաբերություններում նշանակալի ազդեցություն և կշիռ ունեցող տարբեր փաստական հանգամանքներ և իրավիճակներ, օրինակ՝ տարածքային հավակնությունները, ազգային ազատագրական շարժումները, կառավարությունները, օտարերկրյա դատական և այլ ներպետական ակտերը և այլն: Սակայն սույն աշխատության շրջանակներում քննարկվելու են պետությունների և կառավարությունների ճանաչման ինստիտուտների միջազգային-իրավական արդի հիմնահարցերը:

Միջազգային իրավունքի պատմությանը հայտնի ճանաչման առաջին դրվագը 1648թ. Իսպանիայի կողմից Միացյալ Նիդերլանդների ճանաչումն է, որը հռչակել էր իր անկախությունը դեռևս 1581թ.: Սեկ այլ հանրահայտ օրինակ է Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի միջև Ամերիկայի Միացյալ Նահանգների կարգավիճակի վերաբերյալ առաջացած վեճը: Այդ ժամանակ Մեծ Բրիտանիան պնդում էր, որ հեղափոխության կամ պատերազմի միջոցով տարածքի նկատմամբ չի կարող հաստատվել օրինական տիտղոս, եթե այն չի ճանաչվել նախկին ինքնիշխանի կողմից: Սակայն չնայած դրան 19-րդ դարում գերիշխող դարձավ Ֆրանսիայի մոտեցումը, որը հենված էր արդյունավետության տեսության վրա: Պետականության առաջին ճանաչման դեպքից անցել է չորս դար, սակայն ճանաչումը մինչ օրս էլ ծառայում է որպես գործիք պետությունների քաղաքական հակասություններում, և Կոստվոյի ճանաչումը միջազգային հանրության մի մասի կողմից, և դրան ի պատասխան Հյուսիսային Օսեթիայի և Աբխազիայի ճանաչումը Ռուսաստանի և Վենեսուելայի կողմից կարող են ծառայել որպես այդ հանգամանքի վառ օրինակներ և ապացույցներ:

Սակայն ի՞նչ է ճանաչումը: Բոլոր այն դեպքերում, երբ պետության գործողությունները ազդում են կամ կարող են ազդել այլ պետությունների իրավունքների կամ շահերի վրա, բարձրանում է առաջինի գործողությունների իրավաչափության հիմնահարցը: Պետությունների մի շարք միակողմ գործողություններ կարող են ունենալ իրավական և ոչ միայն քաղաքական հետևանքներ այլ պետությունների համար: Նման գործողությունների թվին են դասվում էստոպելը (estoppel՝ սեփական հավակնություններից հրաժարվելը), այլ պետության իրավական հավակնությունները ընդունելը (acquiescence) ընդունելը, ճանաչումը և այլն: Օրի-

նակ՝ Արևելյան Գրենլանդիայի վերաբերյալ գործում Միջազգային ար- դարադատության մշտական պալատը գտավ, որ Նորվեգիան իր արտա- քին գործերի նախարարի միակողմանի հայտարարության արդյունքում հրաժարվել էր Գրենլանդիայի նկատմամբ տարածքային հավակնու- յունները և ճանաչել Դանիայի տիրույթը: Հակիրճ կարելի է ասել, որ ճա- նաչումը պետության համաձայնությունն է առ այն, որ որոշակի փաս- տական հանգամանքները համապատասխանում են վերջիններիս կող- մից իրավական հետևանքներ առաջացնելու համար անհրաժեշտ մի- ջազգային-իրավական չափանիշներին: Գրականության մեջ կարելի է հանդիպել պետությունների ճանաչման տարբեր բնորոշումներ: Մի բնո- րոշման համաձայն ճանաչումը պետությանը տրվող երաշխիքն է առ այն, որ վերջինիս թույլ կտրվի պետությունների համայնքում պահել իր տեղն ու դերը որպես անկախ և ինքնուրույն քաղաքական օրգանիզմ:⁴ Այս բնորոշումը սակայն անհավասարություն է դնում ճանաչողի և ճա- նաչվողի միջև: Սույն աշխատության շրջանակներում մենք կընդունենք Ֆ.Ջեսսսափի կողմից առաջ քաշված բնորոշումը, որի համաձայն պե- տության ճանաչումը գործողություն է, որի համաձայն մի պետություն ըն- դունում է, որ մեկ այլ քաղաքական կառույց կրում է պետականության ատրիբուտներ:⁵

Կարևոր հարցերից մեկը, որին անհրաժեշտ է պատասխանել այն է, թե արդյո՞ք ճանաչումը կարելի է դիտարկել որպես միջազգային-իրավա- կան վարքագծի կանոն, այսինքն առաջացնում է արդյո՞ք այն միջազգա- յին-իրավական պարտականություններ մի կողմի համար և իրավունքներ մյուս կողմի համար:

Միջազգային իրավունքի հեղինակներից մեկի՝ Հ.Լաուտերպախտի կողմից առաջ էր քաշվել այսպես կոչված ճանաչման պարտականու- յան տեսությունը, որի համաձայն, երբ որոշակի սուբյեկտ կրում է պե- տականության հիմնական չափանիշները, բոլոր պետությունները կրում են միջազգային-իրավական պարտավորություն ճանաչելու այդ սուբյեկ- տը որպես միջազգային հարաբերությունների լիարժեք անդամ, այսինքն՝ ճանաչել այն որպես անկախ և ինքնիշխան պետություն:⁶

⁴ Briggs H.W. Recognition of States: Some Reflections on Doctrine and Practice // American Journal of International Law, Vol. 43 (1949), P. 113:

⁵ Jessup P.C. A Modern Law of Nations: An Introduction. The Macmillan Company, New York, 1948. P. 44:

⁶ Lauterpacht H. Recognition in International Law. Cambridge University Press, Cambridge, 1947. P. 7:

Սակայն միջազգային իրավունքը ստեղծվում է միայն և միայն միջազգային հարաբերությունների հիմնական մասնակիցների՝ պետությունների կամաարտահայտության համաձայնեցման միջոցով, ուստի եթե ճանաչման պարտականության վերաբերյալ գաղափարն ամրագրված չէ որևէ միջազգային պայմանագրում, կամ չի բխում պետությունների պրակտիկայից, այսինքն՝ չի դարձել սովորության միջազգային իրավունքի բաղկացուցիչ մաս, վերջինիս մասին խոսելն անտեղին է, անգամ եթե այն առավել տրամաբանական կդարձներ միջազգային իրավունքի համակարգը:

Ուստի Լաուտերպախտի ճանաչման պարտականության տեսությունը չի ընդունվում ժամանակակից միջազգային իրավունքի կողմից և արժանացել է բազմաթիվ քննադատությունների: Մի շարք հեղինակներ պնդում են, որ այս տեսությունը հիմնված է միայն Սեծ Բրիտանիայի և ԱՄՆ-ի պրակտիկայի հետազոտության վրա և այդ իսկ պատճառով չի հանդիսանում *lex lata*, այլ միայն *lege ferenda* այն էլ շատ փոքրաթիվ պետությունների համար¹ և որ արդյունքում Լաուտերպախտը ներկայացրել է ցանկալի որպես իրականություն:

Չնայած այս հանգամանքին, ժամանակակից միջազգային իրավունքի տեսանկյունից այս տեսությունը լիովին գուրկ չէ տրամաբանությունից: Պատկերացնենք մի իրավիճակ, որում պայմանական պետություն A-ն ճանաչվում ողջ միջազգային հանրության կողմից, բացառությամբ մեկ պետության՝ պետություն B-ի: Ավելին այս երկու պետությունները սահմանակից են և ունեն տարածքային վեճ: Կարող է արդո՞ք պետություն A-ն չճանաչած B պետությունը արհամարհել առաջինի կողմից պատշաճորեն իրավաբանորեն հիմնավորված տարածքային հավակնությունները և պարզապես արհամարհել վերջինիս գոյությունը: Բնականաբար, ոչ:

Բացի այդ ժամանակակից միջազգային իրավունքը ճանաչում է միջազգային-իրավական նորմերի աստիճանակարգում: Առանձին նորմեր միջազգային հանրության համար ներկայացնում են այնպիսի կարևորություն, որ առաջացնում են պարտավորություններ ոչ միայն պետությունների երկկողմ հարաբերություններում, այլ պարտավորություններ, որոնք ուղղված են ողջ միջազգային հանրությանը: *Բարսելոնա Թրեքշն*

¹ *Kunz J.L. Critical Remarks on Lauterpacht's "Recognition in International Law" // American Journal of International Law, Vol. 44 (1950), P. 717:*

(Բելգիան ընդդեմ Իսպանիայի) գործով կայացրած վճռում միջազգային դատարանը նշեց, որ «էական տարբերակում պետք է դրվի ողջ միջազգային հանրության հանդեպ պետության ունեցած պարտավորությունների և այլ պետությունների հետ *vis-a-vis* հարաբերություններում առաջացող պարտավորությունների միջև: Հաշվի առնելով ներգրավված իրավունքների կարևորությունը՝ վերջիններիս պաշտպանության հարցում բոլոր պետությունները կարող են ունենալ իրավական շահ. դրանք *erga omnes* պարտավորություններ են»:¹ Ըստ Միջազգային դատարանի, «նման պարտավորությունները ժամանակակից միջազգային իրավունքում ծագում են, օրինակ, ագրեսիայի և ցեղասպանության ակտերի արգելքից, ինչպես նաև մարդկային անհատի հիմնարար իրավունքների վերաբերվող սկզբունքներից և վարքագծի կանոններից, ներառյալ՝ պաշտպանությունը ստրկությունից և ռասայական խտրականությունից»²:

Բարսելոնա Թրեքշն վճռից երկու տասնամյակ անց Արևելյան Թիմորի (Պորտուգալիան ընդդեմ Ավստրալիայի) վերաբերյալ գործով կայացրած վճռում Միջազգային դատարանը նշել է, որ ժողովուրդների ինքնորոշման իրավունքը միանշանակորեն և անվիճելիորեն ունի *erga omnes* բնույթ:³ Սա նշանակում է, որ այն պարտավորությունները, որ պետությունները կրում են ինքնորոշման համար պայքարող ժողովուրդների առջև՝ պարտավորություններ են ողջ միջազգային հանրության առջև և բացի այդ դրանք ողջ միջազգային հանրության պարտավորությունն են: Ուստի, եթե որևէ սուբյեկտ օժտված է ինքնորոշման իրավունքով (օրինակ՝ գաղութացված ժողովուրդը) և ձգտում է իրացնել այն միջազգային իրավունքի կողմից համընդհանուր ճանաչում ստացած եղանակներից մեկով՝ անկախ պետականության ստեղծման ճանապարհով, ապա յուրաքանչյուր պետության պարտավորությունն է հարգել տվյալ ժողովուրդի կամքն ու ցանկությունը: Այստեղից կարելի է ենթադրել, որ պետություններն իրավասու չեն անտեսել նման ինքնորոշման արդյունքում ձևավորվող պետության իրավասուբյեկտությունը: Նոր պետության հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատելուն, վերջինիս հետ պայմանագրեր կնքելուն կամ անգամ բացահայտ *de jure* ճանաչելուն ի-

¹ *Barcelona Traction, Light and Power Company, Limited (Belgium v. Spain)*, Second Phase ICJ Reports 3 (1970). P. 32, para. 33:

² *Ibid.* P. 32, para. 34:

³ *East Timor (Portugal v. Australia)*, ICJ Reports 90 (1995), P. 102, « 29:

հարկե այդ պետություններին ոչինչ չի պարտադրում, սակայն եթե ինքնորոշման իրավունքի իրացման արդյունքում նոր կայացած պետությունը ներկայացնի, օրինակ, ռեպարացիայի պահանջ մեկ այլ պետության դեմ առաջինիս պատճառած վնասի համար, վերջինը պարզապես չի կարող անտեսել այդ նոր պետության գոյությունը, քանի որ նման անտեսումը պարզապես կհանդիսանա ինքնորոշման արդյունքում ստեղծված սուբյեկտի ինքնիշխան հավասարության ոտնահարում, ուստի նաև ինքնորոշման *erga omnes* նորմի ոտնահարում: Ընդ որում նման իրավախախտումը չէր լինի պարզապես ֆիկցիա, որը հնարավոր չէր լինի իրացնել հարկադրանքի միջոցով, քանի որ *erga omnes* պարտավորությունների բնույթի ուժով միջազգային հանրության ցանկացած ներկայացուցիչ հնարավորություն կունենար դիմելու հարկադրանքի միջոցների (հակամիջոցների) ճանաչումը մերժող պետությանը իրավաչափ վարքագիծ պարտադրելու նպատակով:¹

Ճանաչման նմանատիպ պարտավորության մասին է ըստ էության խոսում նաև Ա.Բրաունլին: Վերջինս սակայն հակասում է ինքն իրեն, նախ նշելով, որ ճանաչումը զուտ քաղաքական ակտ է և որպես այդպիսին չի կարող առաջացնել ոչ մի իրավական պարտավորություններ, իսկ այնուհետև ավելացնելով, որ *«եթե որևէ սուբյեկտ կրում է պետականության տարրերը, այլ պետությունները ռիսկի են դիմում իրավական առումով՝ արհամարհելով այդ պետության հանդեպ իրենց հիմնարար պարտավորությունները»*²: Բրաունլին թեև չի հստակեցնում, թե ինչ է նշանակում ճանաչումը «քաղաքական» առումով և ճանաչումն առավել խորը իմաստով,³ սակայն բերում է վերջինիս օրինակ՝ նշելով, որ Իսրայելի հարևան արաբական պետությունները, որոնք բազմիցս վիճարկել են Իսրայելի պետականության իրավաչափությունը, բնականաբար չեն կարող իրենց թույլ տալ կառուցել սեփական հարաբերությունները վերջինիս հետ, այնպես, ինչպես պետությունը կկառուցեր իր հարաբերությունները

¹ *Tams C. J. Enforcing Obligations Erga Omnes in International Law.* Cambridge University Press, Cambridge / New York, 2005. P. 198-207:

² *Brownlie I. Principles of Public International Law.* Oxford University Press, Oxford, 2008, 7th ed. P. 89-90:

³ Հատկանշական է, որ իր առավել վաղ աշխատություններում Բրաունլին ընդհանրապես հրաժարվում էր վերագրել ճանաչման ինստիտուտին որևէ իրավական նշանակություն: Տես *Brownlie I. Recognition in Theory and Practice...* P. 627-628: Ժամանակի ընթացքում սակայն նա հրաժարվեց այս մոտեցումից՝ հակվելով քաղաքական և իրավական իմաստով ճանաչման տարբերակմանը:

ոչ պետական կազմավորման հետ¹ և բնականաբար պետք է հաշվի առնեն, օրինակ, միջպետական հարաբերություններում գործող *jus ad bellum* և *jus in bello* իրավունքի ճյուղերից բխող իրավունքներն ու պարտականությունները:

Ճանաչման պաշտոնական հայտարարությունն, իհարկե, գուտ քաղաքական քայլ է, և այստեղ Յ.Բրաունլիի հետ չհամաձայնվելը դժվար է, սակայն, որտեղի՞ց է այդ դեպքում առաջանում պետության պարտավորությունը ճանաչել (կամ ավելի ճիշտ դիտարկել) մեկ այլ սուբյեկտ որպես պետություն: Իսրայելի պետականությունը իհարկե չի ստեղծվել ինքնորոշման իրավունքի իրացման արդյունքում (դասական առումով), այլ Գլխավոր ասամբլեայի բանաձևի շնորհիվ² և այս առումով որևէ *erga omnes* պարտավորության մասին խոսելը կլիներ անտեղիկ (1947թ., երբ ստեղծվեց Իսրայելի պետությունը *erga omnes* և *jus cogens* հասկացությունները պարզապես դեռևս գոյություն չունեին): Սակայն գոյություն ունեւորման միջազգային իրավունքի մեկ այլ հիմնարար կանոն՝ *ex factis jus oritur*,³ որի համաձայն փաստական հանգամանքները ստեղծում են միջազգային հարաբերությունների մասնակիցների համար իրավունքներ և պարտականություններ և հետևաբար այդ հարաբերությունների մասնակիցները պարզապես չեն կարող արհամարհել դրանք: Հետևաբար, Իսրայելի պետականության դեպքում մենք գործ ունենք պետության հետ, որը ճանաչված է միջազգային հանրության ճնշող մեծամասնության կողմից և հանդիսանում է Միավորված ազգերի կազմակերպության անդամ, ուստի որքան էլ որևէ պետություն հայտարարի, թե այն չի ճանաչում Իսրայելը որպես պետություն, միևնույն է վերջինիս հանդեպ իր միջազգային իրավունքների և պարտականությունների տեսանկյունից այն պարզապես ստիպված կլինի ընդունել Իսրայելի պետականությունը՝ որջ միջազգային հանրության կողմից ճանաչված լինելու ուժով:

Եվ բնականաբար այս նույն մոտեցման հիման վրա կարելի է խոսել նաև ինքնորոշման իրավունքի իրացման ճանապարհով ստեղծված պետության հանդեպ այլ պետությունների միջազգային իրավունքներ և

¹ Ibid.:

² GA. Resolution 181 (II), Future government of Palestine. UN Doc. A/RES/181 (II), 29 November 1947:

³ *Milano E.* Unlawful Territorial Situations in International Law: Reconciling Effectiveness, Legality and Legitimacy. Martinus Nijhoff Publishers, Leiden / Boston, 2005. P. 51-53:

պարտականություններ ընդունելու պարտավորության մասին, քանի որ մի դեպքում խոսում ենք ողջ միջազգային հանրության կողմից ընդունված փաստի մասին, իսկ մյուս դեպքում ողջ միջազգային հանրության կողմից ընդունված և ճանաչված նորմի մասին:

Ճանաչումը ողջ միջազգային հանրության (կամ դրա ճնշող մեծամասնության) կողմից ի հարկե այնքան էլ հեշտ չէ բնորոշել: Կարելի է օրինակ հստակորեն ասել, որ նման համընդհանուր ճանաչման մասին այսօր հնարավոր չէ խոսել Կոստվոյի Հանրապետության պարագայում: Թեև վերջինս ճանաչված է շուրջ յոթանասուն պետությունների կողմից, Ռուսաստանի Դաշնության և Չինաստանի Ժողովրդական Հանրապետության, ինչպես նաև մի շարք այլ պետությունների բացահայտ դիմակայության պայմաններում բնականաբար հնարավոր չէ խոսել վերջինիս ճանաչման (ընդունման) պարտավորության մասին: Նման պարտավորության առաջացման շեմ պայմանականորեն կարելի է անվանել, օրինակ, անդամակցությունը ՄԱԿ-ին, քանի որ վերջինս առնվազն ենթադրում է բոլոր անդամների երկու երրորդի, ներառյալ Անվտանգության խորհրդում վետոյի իրավունքով օժտված պետությունների համաձայնությունը:

Նմանատիպ դատողություններ կարելի է գտնել նաև Ֆ.Ս.Ջեսսսափի աշխատություններում վերջինս առաջ է քաշում «միջազգային հանրության կողմից ճանաչման շահագրգռվածության» (“community interest in recognition”) տեսությունը:¹ Ջեսսսափի համաձայն, երբ առաջանում է նոր պետություն, վերջինս անխուսափելիորեն հայտնվում է ողջ միջազգային հանրության ուշադրության կենտրոնում, քանի որ բոլոր պետությունները շահագրգռված են նոր տնտեսական և առևտրային հարաբերությունների հաստատման մեջ և ցանկանում են ունենալ «խաղաղասեր» հարևաններ և դաշնակիցներ: Այն պահից, երբ հաստատվում է միջազգային հանրության շահագրգռվածությունը և հետաքրքրությունը, վերջինիս անխուսափելիորեն հետևում է միջազգային ճանաչումը, որն արդեն գուտ ձևական գործընթաց է և կարող է իրականացվել տարբեր եղանակներով՝ *de jure*, *de facto*, ունիվերսալ միջազգային կազմակերպությանը անդամակցության ճանապարհով և այլն:² Սա իհարկե նույնպես չի նշանակում, որ

¹ *Jessup P.C.* A Modern Law of Nations: An Introduction. The Macmillan Company, New York, 1948. P. 44:

² *Ibid.* P. 45:

պետությունները կրում են ձևական ճանաչման պարտականություն, սակայն այդ պահից պետությունները պարզապես չեն կարող հրաժարվել նման սուբյեկտի նկատմամբ իրենց պարտավորություններից, որոնք բխում են ընդհանուր միջազգային իրավունքից:

Այս տեսանկյունից հատկանշական է, որ XXդ. երկրորդ կեսում ժողովուրդների ինքնորոշման իրավունքի (առաջին հերթին ապագադուքացման իրավունքի) արագընթաց կողմֆիկացիան նույնպես պայմանավորված է եղել միջազգային հանրության շահերով՝ առաջին հերթին միջազգային անվտանգության և խաղաղության պահպանման անհրաժեշտությամբ: Ուստի ինքնորոշման իրավունքի արդյունավետ իրացումը նույնպես կարելի է համարել միջազգային հանրության շահերից բխող գործընթաց և սա լիովին համընկնում է նաև *erga omnes* հասկացության բովանդակությանը:

Ուստի կարելի է պնդել, որ ինքնորոշման իրավունքի սուբյեկտն իրոք ունի ճանաչվելու իրավունք, և որ պետությունները կրում են ճանաչելու պարտականություն: Եվ այս առումով Լատուտերպախտի կողմից առաջ քաշած տեսությունը լիովին իմաստագուրկ չէ: Սակայն նման ճանաչման իրավունքը չի ենթադրում պետությունների պարտավորություն դիմելու ճանաչման ձևական արարողակարգի, այլ ենթադրում է այդ սուբյեկտի հանդեպ պետությունների կրած իրավունքների և պարտականությունների հերքման անհնարինություն: Եվ այստեղ առաջանում է Յ.Բրաունլիի կողմից առաջ քաշված «քաղաքական» ճանաչման և «առավել խորը» իմաստով ճանաչման ինստիտուտների տարբերակման անհրաժեշտություն:

Laura Badalyan

Post graduate researcher at the Chair of European and International Law, YSU

THE CONCEPT OF RECOGNITION: MODERN ATTITUDES

As we know, at the beginning of the twentieth century there were some fifty acknowledged States. Immediately before World War 2 there were about seventy-five. By 2005, there were almost 200. The emergence of so many new States has changed the character of international law. In my article, called "Recognition. modern aspects" I refer to the problem of recognition, review the changing opinions on the topic since the seventeenth century. It is obvious, that the modern law of statehood and its relation with recognition must be examined. Before examining state practice on the matter, it is necessary to refer again to the underlying conflict over the nature of recognition. Neither theory of recognition satisfactorily explains modern practice, but the conclusion must be that the status of an entity as a State is, in principle, independent of recognition, although the qualifications already made suggest that the differences between declaratory and constitutive schools are less in practice than has been depicted.